ՇԻՐԱԿԻ Մ.ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

30 Օգոստոսի 2018, N-15.2

«ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ » ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՌԵԿՏՈՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 40-րդ կետի 2-րդ ենթակետով՝ ՇՊՀ հոգաբարձուների խորհուրդը որոշում է.

Ռեկտորի ընտրության կանոնակարգում կատարել հետևյալ փոփոխությունները (փոփոխված հատվածները).

2.4. Մրցույթին մասնակցելու համար պահանջվում են հետեւյալ փաստաթղթերը.
ա) ինքնաառաջադրման դեպքում՝ դիմում, իսկ ՇՊՀ-ի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից առաջադրվելու դեպքում՝ ստորաբաժանման համապատասխան որոշումը եւ հավակնորդի գրավոր համաձայնությունը,
բ) լուսանկար,
գ) անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը,
դ) ինքնակենսագրական, որը պետք է պարունակի հավակնորդի ուսման, աշխատանքային, գիտակրթական գործունեության փորձի նկարագիրը եւ կազմված լինի այս կանոնակարգի հավելված հանդիսացող ձեւաչափով: Ձեւաչափի էլեկտրոնային տարբերակը կարելի է ներբեռնել ՇՊՀ պաշտոնական կայքից,
ե) բարձրագույն կրթության դիպլոմի պատճենը, գիտական աստիճանը հավաստող վկայականի պատճենը,
զ) հավակնորդի գործունեության ծրագիրը (ՇՊՀ զարգացման հայեցակարգ)՝ փակ եւ կնքված փաթեթով, որը բացվում է հայտերի ընդունման վերջնաժամկետից հետո: Փաթեթը պետք է պարունակի նաեւ ծրագրի էլեկտրոնային տարբերակը էլեկտրոնային կրիչի վրա:

...

2.10. Հայտերը ընդունում է ՇՊՀ Հոգաբարձուների հանձնախումը, որը բաղկացած է 4 հոգուց, այդ թվում՝ ՀԽ քարտուղարը, ՇՊՀ ՀԽ դասախոսական կազմից մեկ անդամ, ուսանողական կազմից մեկ անդամ եւ եւս մեկ անդամ: Հանձնախումբը իրավազոր է հայտերն ընդունել այն դեպքում, երբ ներկա է ՀԽ քարտուղարը եւ հանձնախմբից առնվազն երկու անդամ: Հանձնախմբի անվանական կազմը ձեւավորվում է ՇՊՀ ռեկտորի մրցույթի հայտարարման նիստում: Հայտերը ընդունելիս խորհրդի հանձնախումբը պարտավոր է ստուգել հայտի համապատասխանությունը սույն կանոնակարգի 2.4 կետում ներկայացված պահանջներին: Փաստաթղթերի թերի լինելու դեպքում հավակնորդը տեղեկացվում է հայտը ներկայացնողին այդ մասին նույն պահին, իսկ դրա անհնարինության դեպքում՝ 1 օրվա ընթացքում, հեռախոսազանգով կամ sms հաղորդագրությամբ եւ էլեկտրոնային նամակով: Թերությունները կարող են վերացվել հայտերի ընդունման համար սահմանված ժամկետի ընթացքում:

...

2.11. Հայտերի ընդունման ավարտի հաջորդ օրը խորհրդի քարտուղարն ընդունված փաստաթղթերի փաթեթը կից գրությամբ հանձնում է խորհրդի նախագահին: Խորհրդի նախագահը մրցույթի անցկացումից առնվազն 5 օր առաջ՝
ա) խորհրդի անդամներին է ուղարկում յուրաքանչյուր հավակնորդի ներկայացրած փաստաթղթերի պատճենները՝ տպագիր եւ/կամ էլեկտրոնային տարբերակով՝ ըստ անդամի

ցանկության: ...

....

3.2. Ռեկտորի պաշտոնում կարող է ընտրվել Հայաստանի Հանրապետության այն քաղաքացին, ով ունի գիտական աստիճան, առնվազն բուհ-ում առնվազն 3 տարվա դասավանդման փորձ եւ վերջին 15 տարվա ընթացքում առնվազն 5 տարվա հանրային կառավարման կամ բարձրագույն կրթության համակարգում առնվազն 5 տարվա վարչական աշխատանքի ստաժ:

...

4.1. Ռեկտորի ընտրության համար գումարված խորհրդի նիստը նախապատրաստում եւ նախագահում է խորհրդի նախագահը: ՇՊՀ-ի ռեկտորի ընտրության նիստը դռնբաց է: Նիստի անցկացման դահլիճում կարող է ներկա գտնվել ՇՊ համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի ցանկացած անդամ եւ ՇՊ համալսարանի ցանկացած սովորող: Ռեկտորի ընտրության նիստին համալսարանի շենքի այլ՝ հատուկ այդ նպատակով հատկացված, սրահում իրականացվող ուղիղ հեռարձակմանը նույն սրահում կարող է հետեւել ցանկացած չափահաս անձ: Նիստը ուղիղ հեռարձակվում է համացանց YouTube կայքում եւ վերահեռարձակվում է Ֆեյսբուք սոցիալական ցանցում: Հեռարձակման հղումը հրապարակվում է նիստից առնվազն 5 օր առաջ ՇՊՀ կայքում եւ ֆեյսբուքյան էջում: Իրազեկումը 5 օրերի ընթացքում կրկնվում է առնվազն օրական պարբերականությամբ:

...

4.7. Խորհրդի նախագահը օրակարգի երկրորդ հարցով ծրագրային ելույթների համար, ըստ ազգանունների այբբենական կարգի, ձայնը տալիս է հավակնորդներին: Յուրաքանչյուր հավակնորդ ունի առավելագույնը 30 րոպե տեւողությամբ ելույթի իրավունք: Յուրաքանչյուր հավակնորդի ելույթից հետո Խորհրդի անդամները իրավունք ունեն հարցեր հղելու հավակնորդին: ՀԽ անդամի հարցի առավելագույն տեւողությունը, պատասխանի առավելագույն տեւողությունը եւ հարցուպատասխանի ընդհանուր առավելագույն տեւողությունը սահմանվում է ռեկտորի մրցույթի հայտարարման Հոգաբարձուների խորհրդի նիստում:

ՀԽ անդամների հարցերից եւ դրանց տրված պատասխաններից հետո սրահում գտնվող պրոֆեսորադասախոսական կազմի անդամները եւ սովորողները իրավունք են ստանում հարցեր տալու հավակնորդին: Յուրաքանչյուր հարցի առավելագույն տեւողությունը, պատասխանի առավելագույն տեւողությունը եւ հարցուպատասխանի ընդհանուր առավելագույն տեւողությունը սահմանվում է ռեկտորի մրցույթի հայտարարման Հոգաբարձուների խորհրդի նիստում:

ՇՊՀ այլ սրահից ՀԽ նիստին հետեւող այլ անձանց հարցերը գրանցվում են առանձին եւ դրանք տրվում են հավակնորդին ընթերցմամբ: Այս հարցուպատասխանի ընդհանուր առավելագույն տեւողությունը սահմանվում է ռեկտորի մրցույթի հայտարարման Հոգաբարձուների խորհրդի նիստում:

Թեկնածուին տրվող հարցերը կարող են վերաբերել նրա ներկայացրած փաստաթղթերին, ծրագրային ելույթին, կառավարման հմտություններին եւ աշխատանքային փորձին: Հարցերը եւ պատասխանները արձանագրվում են խորհրդի քարտուղարի կողմից:

Վիրավորական կամ զրպարտչական բնույթի հարցերը սահմանափակում է ՀԽ նախագահը:

ՇՊՀ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Լ.ԲԱՐՍԵՂՅԱՆ